ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«07» 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000013

Ձեռնարկողը՝ ***«Յուքոմ» ՍՊԸ***
Ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9

Գործունեությունը՝ ***Բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000013

« 13 » 02 2020թ.

<<Յուքոմ>> ՍՊԸ կողմից նախատեսվող բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	<<Յուքոմ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Բ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

<<Յուքոմ>> ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բջջային կայանի էլեկտրամատակարարման համակարգը նախատեսված է տեղադրել Մեղրի համայնքի՝ Շվանիձոր գյուղի վարչական տարածքում, բնակավայրից 720 մ հեռավորության վրա: Գործունեության իրականացման համար <<Յուքոմ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով հատկացվել է 0,04 հա հողատարածք /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 27102018-09-0023 վկայական /կառույցների/ ԼՏԵ, բջջային կայան/ տեղադրման համար: Էլեկտրամատակարարման և օպտիկամանրաթելային օդային գծերի անկացման համար նախատեսված տարածքները համընկնում են «Զանգեզուր>> կենսոլորտային համալիրի>> ՊՈԱԿ-ի՝ <<Արևիք>> մասնաճյուղի <<Արևիք>> ազգային պարկի տարածքների հետ /համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարության՝ 09.07.2019թ թիվ 5/22.3/51715 գրության/:

Բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի /ՕԳ/կառուցման աշխատանքային նախագծի համար հիմք է հանդիսացել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից 25.01.2018թ գրությամբ տրված N° ՏՊ-570-10(6)/0016 տեխնիկական պայմանները, համաձայն որի բջջային կայանի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 10/0.4 կՎ, 25 կՎԱ հզորության լարման տրանսֆորմատորային ենթակայանի /ԼՏԵ/ տեղակայում՝ առանձին ցանկապատված տարածքում ապահովելով անվտանգության գոտին: Աշխատանքային նախագծի ծավալների մեջ են մտնում՝ տրանսֆորմատորային ենթակայանը, 10կՎ օդային գիծը, հողանցման համակարգերը և 0.4 կՎ սնող մալուխը: Շինարարական աշխատանքների իրականացնելու համար ընկերությունը կօգտագործի նշված տարածքում առկա գրունտային ճանապարհը, որը ներկայումս ծառայում է <<ՎիվաՍել-ՄՏՍ>> ընկերության նմանատիպ ենթակառուցվածքի սպասարկման համար:

ԼՏԵ-ի սնումն իրագործվելու է «Շվանիձոր» 35/10 կՎ ե/կ-ի «Շվանիձոր» 10կՎ օդային գծից սնվող «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությանը պատկանող 10կՎ օդային գծից՝

ճյուղավորումով: Նախագծված գծի ընդհանուր երկարությունը կկազմի 260մ, որի անցկացման համար նախատեսված է տեղադրել 8 հենասյուներ: 10կՎ ՕԳ-ը նախատեսված է փայտյա հենասյուներով, երկաթբետոնե կցորդով, AC-35/6.2 մակնիշի հաղորդալարով: ՕԳ-ի թիվ 1 և թիվ 7 հենասյունների վրա նախատեսված է զատիչ կայան, որոնցով հենասյուները պետք է հողանցվեն: Պաշտպանությունը գերլարումներից կատարվելու է վենտիլային պարպիչներով, որոնք տեղադրվելու են ԼՏԵ-ի 10կՎ մուտքի վրա: Կայանի սպառիչների սնումն իրականացվում է 4×10 մմ^2 մալուխով՝ մետաղաճոպանով, որն անցկացվում է ԼՏԵ-ի 0.4 կՎ վահանից մինչև մուտքի արկղ:

Օպտիկամանրաթելային մալուխի ընդհանուր երկարությունը կկազմի 500մ, անցկացման համար նախատեսվում է տեղադրել 15 հենասյուներ: Օպտիկամանրաթելային մալուխը հանդիսանում է դիէլեկտրիկ և այն կայուն է էլեկտրամագնիսական ալիքների նկատմամբ: Մալուխի մոնտաժման համար օգտագործվող ամրակները ունիվերսալ են՝ պատրաստված նիկելապատ մետաղից: Վերջիններս չեն ենթարկվում կոռոզիայի և կարող են ամրացվել ցանկացած պրոֆիլ ունեցող սյան վրա: Առաջին դետալը ամրանում է սյանը, երկրորդ դետալը՝ մալուխին: Օպտիկամանրաթելային մալուխները միմյանց զոդելու համար տեղադրվելու են հատուկ բաժանման տուփեր:

Նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից եղել է նպատակահարմարը:

Նախագծով նախատեսված աշխատանքները ներառում են հողային աշխատանքների իրականացում՝ հիմքերի փորում, հենարանների տեղադրում, ենթակայանի տեղակայում, լարերի անցկացում և միացում: Նշված տարածքներում աշխատանքների իրականացման համար ծառահատում նախատեսված չէ, քանի որ տարածքում ծառաթփուտային բուսականությունը բացակայում է:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի և ենթակայանի կառուցման շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 2 ամիս: Համաձայն նախագծի հենարանների հիմքերի և ենթակայանի կառուցման հողային աշխատանքներից հանվող հողային զանգվածի և հետլիցքի ծավալը՝ հենասյուների փոսորակների հորատման և խրամուղու փորման աշխատանքներից կկազմի 17,591 մ^3, իսկ ենթակայանի կառուցման աշխատանքներից կկազմի 10մ^3: Շինարարական աշխատանքների ընթացքում հանվող գրունտն անբողջությամբ օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ ընդհանուր՝ 8մ^3 ծավալով առաջացող հողի բերրի շերտը ջրադիմացկուն ծածկով պահեստավորվելու է, աշխատանքներիի ավարտից հետո անմիջապես օգտագործվում տարածքի հարթեցման և վերականգնման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները պայմանավորված կլինեն հողածածկի ժամանակավոր խախտումով, շինարարական մեքենաների և տեխնիկական միջոցների աշխատանքի արդյունքում մթնոլորտային օդի ժամանակավոր աղտոտումով /փոշու և ծխագազերի առաջացում չկազմակերպված արտանետումների աղբյուրներից/ կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություններով:

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով շինարարության ժամանակահատվածի համար իրականացվել են մթնոլորտային արտանետումների հաշվարկներ:

Շինարարության փուլում խմելու և տեխնիկական նպատակով անհրաժեշտ ջուրը՝ 14,145 մ^3/շինժամ ընդհանուր ծախսով նախատեսված է շինհրապարակ բերել Շվանիձոր գյուղի ջրացանցից՝ ջրատար մեքենաներով, կամ տարողություններով: Տեխնիկական ջուրը նախատեսված է հարթակների, ճանապարհների ջրցանի և հողային զանգվածների խոնավացման համար:

Գործունեության իրականացման արդյունքում /շինարարության և շահագործման փուլեր/ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմման և

կանխարգելման համար ՇՄԱԳ-ում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են հողային ռեսուրսների, մթնոլորտային օդի և տարածքի կենսաբազմազանության պահպանությանը: Մասնավորապես, հողային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում առաջացող շինարարական թափոնները պահեստավորել հատուկ նախատեսված վայրում՝ ծածկի տակ,
- ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ՝ հնարավոր արտահոսքերից (յուղ, դիզել, բենզին և այլն) խուսափելու համար,
- բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների /ներառյալ՝ թրթուրավոր տրանսպորտ/ երթևեկությունը և կայանումը հատուկ պահպանվող տարածքում և երթևեկությունն իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով,
- առաջացած շինարարական թափոնները տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում՝ յուղի հնարավոր արտահոսքերից խուսափելու համար
- տրանսֆորմատորների տակ նախատեսել խճով լցված բետոնյա հոր, որտեղ կլցվի արտահոսած յուղը,
- բանեցված և ավելցուկային տրանսֆորմատորային յուղերը հավաքել մետաղական տարողությունների մեջ և հանձնել վերամշակող կազմակերպություններին,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիայի/վերականգնման համար կօգտագործվի պահեստավորված բուսաշերտը: Վերականգնման ենթակա մակերեսը կկազմի 40մ^2, իսկ աշխատանքների համար նախատեսված ծախսը գնահատվել է 12000 ՀՀ դրամ:

Կենսաբազմազանության /կենդանական և բուսական աշխարհ/ պահպանության նպատակով մշակվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որում պահպանության ենթակա կենսաբազմազանության տեսակների համար առաջարկվել է հատուկ գործողությունների պլան՝ համապատասխան միջոցառումներով, բացառելու նպատակով բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը: Որպես մեղմացնող միջոցառում նախատեսված է հենասյունների բետոնյա հիմքերը ծածկել տեղանքին բնորոշ քարացրոններով:

Համաձայն դիտարկվող տարածքում կենսաբազմազանության վերաբերյալ իրականացված դաշտային ուսումնասիրությունների արդյունքների՝ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր սոցիալական կարճաժամկետ ազդեցությունների նվազեցման համար նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, այդ թվում՝ երթևեկության կառավարում, ճանապարհային նշաններով կահավորում և այլն:

Գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող միջոցառումներն իրենց գործողություններով, իրականացման եղանակներով և ժամկետներով ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում:

Պատճառաբանական եզրահանգումներ: Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը դրական է՝ բջջային և ինտերնետային կապի հասանելիություն տեսանկյունից: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում գործունեության հետ կապված հանրային քննարկումներ են անցկացվել Մեղրի համայնքում, որոնց ընթացքում նախատեսվող գործունեությունը մասնակիցների

կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկություններով հաշվետվությունը լրամշակվել է:

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր բացասական ազդեցություններ կդիտվեն շինարարության ընթացքում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն կարճատև: Պայմանավորված շինարարական աշխատանքների ոչ մեծ ծավալով, ինչպես նաև շինարարական տեխնիկայի քիչ քանակությամբ շինարարության ընթացքում աղմուկի ազդեցություն չի սպասվում: Հաշվետվությունում նախատեսվել են նաև միջոցառումներ ուղղված՝ աշխատանքի անվտանգությանը, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանը:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև բնապահպանական տարածքների էկոհամակարգի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

«Արևիք» ազգային պարկի տարածքում նախատեսվող գործունեության իրականացումն ունի իր կարևորությունը, քանի որ բջջային և ինտերնետ կապի հասանելիության ապահովումը կարող է նպաստել ազգային պարկի տարածքում պահպանության և այլ աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ 2006թ-ի նոյեմբերի 27-ի <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ հաստատված Հավելված N1-ի պահանջներով, ինչպես նաև 2010թ. հունվարի 29-ի N71-Ն և N72-Ն <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>>, 2014թ-ի հուլիսի 31-ի N781-Ն ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:
- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է Մեղրի համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:
- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

<<Յուքոմ>> ՍՊԸ կողմից նախատեսվող բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան